ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1708 06.06.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 31-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Գավառի ՁՊՎ արձանագրեց մի շարք թերություններ և խախտումներ:

Մուտք № 2822
09 06

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի բոլոր խցերը գտնվում էին շատ փոշոտ վիճակում:
2. Բուժսենյակում առկա դեղարկղի վրա բացակայում էին ապակիները, անհասկանալի էր նրա առկայությունը այդ վիճակում:
3. Սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և առկա էր տհաճ հոտ:
4. Սննդի տաքացման սենյակում բացակայում էր աման լվանալու հեղուկը:
5. Այցելության ընթացքում ՁՊՎ-ում պահվում էին 4 կալանավորված անձիք և մեկ ձերբակալված անձ: Ձերբակալված անձին տրամադրել էին միայն սավան, իսկ մնացած սպիտակեղենի պարագաները բացակայում էին, ընդհանրապես չէին տրամադրել:
6. ՁՊՎ-ում առկա էր երկու կոմպլեկտ սպիտակեղեն, որոնք գտնվում էին կեղտոտ վիճակում: Եթե այդ պահին նոր ձերբակալված անձ ընդունեին ՁՊՎ, համոզված ենք, որ չէին կարող և չէին տրամադրելու նոր սպիտակեղեն տրամադրել:
7. Բուժսենյակի բուժավանը նման էր կտորից ինչ որ ծածկոցի, որը անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար մաքրել և ախտահանել հնարավոր չէ: Ըստ ՁՊՎ-ի վարչակազմի խոսքի՝ արդեն մի քանի տարի է դա են օգտագործում և խնդիր չի

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org e-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 3892
09 06 2017թ.

առաջացել: Բուժսենյակում սանիտարահիգիենիկ վիճակը ընդհանրապես չի պահպանվում:

Խախտումներ՝

1. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակի պահանջը չէր պահպանվում, ձերբակալման ամսաթվի և ժամանակի փոխարեն տվյալ աղյուսակում լրացվում է անձին ՁՊՎ ընդունվելու ժամը, և թե՛ Դիտորդական խմբի համար և թե՛ վարչակազմի համար տվյալ գրանցամատյանում կատարված գրառումների արդյունքում հնարավոր չէ թե նշված անձը երբ է վերցվել արգելանքի, ձերբակալվել կամ բերման ենթարկվել: Դա մեծ խնդիր է, որովհետև հնարվոր չէ պարզել թե անձը երբվանից է ազատությունից զրկվել և նրա ՀՀ Սահմանադրությունով նախատեսված առավելագույն 72 ժամ արգելանքի տակ պահելը խախտվել է թե ոչ:
2. Ս.Թ-ն ՁՊվ է ընդունվել որպես ձերբակալված 25.02.2017թ-ին ժամը 10.25-ին ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի: ՀՀ ԱՆ ՔԿՀ է տեղափոխվել 27.02.2017թ-ին ժամը 10.15-ին: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 9-րդ սունյակում նշված տեղափոխման վերաբերյալ գրառումը՝ 27.02.2017թ-ը ջնջված և 28 կամ 29–ը փոխված է 27-ի: Ավելին՝ ըստ <<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ Ս. Թ-ն ՀՀ ԱՆ ՔԿՀ տեղափոխվելուց մոտավորապես 7-ից 8 ժամ հետո, նույն օրը՝ 27.02.2017թ-ին ժամը 18.45-ից 18.55 ընկած ժամանակահատվածում խցից դուրս է բերվել և տեղափոխվել է զուգարան, որը հնարավոր չէ, քանի որ նույն օրը ժամը 10.15-ին խցից դուրս բերված է եղել և տեղափոխվել էր ՀՀ ԱՆ ՔԿՀ: Արդյունքում նշված անձը ավելի երկար է պահվել ՁՊՎ-ում, բայց գրանցամատյանում անհասկանալի պատչառներով նրա ժամկետը անհասկանալի պատճառներով փոխել են: Ավելին՝ խորը ուսումնասիրության արդյունքում նկատվում է, որ խոսքը 27.02.2017թ-ի կամ 28.02.2017թ-ի մասին չէ, այլ 29.02.2017թ-ի մասին է, մոտ երկու օրվա տարբերություն է տալիս: Խնդրում ենք ուշադրություն դարձնել նշված փաստի վրա:
3. Կ.Ք-ն ՁՊՎ է ընդունվել 19.03.2017թ-ին ժամը 03.00-ին: Ազատ է արձակվել մոտ 2.5 օր անց՝ 21.03.2017թ-ին ժամը 15.00-ին: ՁՊՎ ընդունվելու ժամանակ գանգատներ չի ունեցել, ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի: Սակայն նույն օրը, ժամը 21.35-ին հրավիրվել է շտապ օգնություն: Արձանագրվել էր, որ ունի ցավեր և միաժամանակ արձանագրել է, որ տվյալ անձի մոտ առկա է ինֆեկցիոն

հիվանդություն <<հեպատիտ C>>: 20.03.2017թ-ին ժամը 11.05-ին կրկին հրավիրվել է շտապ օգնություն և այլ բժշկի կողմից արձանագրվել է, նույն ախտանիշները, որ ունի ցավեր և ունի <<հեպատիտ C>>: Անընդունելի է, 2 օր սուր վարակիչ հիվանդություն ունեցող անձին ՀՊՎ-ում պահելը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Իսկանդարյան

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 22-1-2403

«13» 07 2017թ.

Ձեր 06.06.2017թ. թիվ 2621/1708 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Սուրեն Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2017թ. մայիսի 31-ին ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Ծառայողական քննության ընթացքում պարզվել է, որ դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ի երեք խցերում պահվել են կալանավորված ու ձերբակալված թվով 5 անձինք: Դիտորդների խմբի անդամները մուտք են գործել միայն թիվ 1 խուց, որտեղ պահվել է մեկ ձերբակալված ու անհասկանալի է թե խմբի անդամները ինչպես տեղեկացան, որ բոլոր խցերը գտնվում էին <<շատ փոշոտ>> վիճակում: Նշված ՁՊՎ-ի ընդհանուր տարածքը՝ այդ թվում նաև բուժզննության սենյակը և խցերը ամեն օր մաքրվում են հավաքարարի կողմից և դրանք փոշոտ չեն եղել, իսկ դիտորդների խմբի այցելության ժամանակ (ժամը 08:10) սանհանգույցում բնականաբար կարող էր լինել տհաճ հոտ, քանի որ ՁՊՎ-ում պահվել են թվով 5 անձինք և հավաքարարը այդ ժամին դեռ հասցրած չի եղել այնտեղ մաքրման աշխատանքներ կատարել:

Բուժզննության սենյակի դեղերի պահարանը փոխարինվել է փայտե դեղարկղով, իսկ մահճակալը փոխարինվել է բժշկական թախտայով՝ ծածկված մեկանգամյա օգտագործման բժշկական սավանով:

ՁՊՎ-ի սննդի տաքացման սենյակում <<ման լվանալու հեղուկի>>-ի փոխարեն առկա է եղել սպասք լվացող և միաժամանակ ախտահանող <<Մաքրուհի>> տեսակի մածուկ, որը լիովին բավարար է ներքին կանոնակարգի 184-րդ կետի պահանջին:

ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածին տրամադրվել է ոչ թե միայն մեկ սավան, այլ պահանջվող մեկ լրակազմ սպիտակեղեն, սակայն ձերբակալվածը բարձը գետնին գցելով այն կեղտոտել է, որը ՁՊՎ վարչակազմը վերցրել է նորով փոխարինելու նպատակով և մինչև նոր բարձի երես

տրամադրելը ՁՊՎ են մուտք գործել դիտորդների խմբի անդամները, որոնց կողմից նշված հանգամանքը արձանագրվել է այնպես, իբր ձերբակալվածին բացի սավանից այլ սպիտակեղեն չի տրամադրվել:

ՁՊՎ ոստիկանի հանգստի սենյակում 2 լրակազմ օգտագործված սպիտակեղենը դրված է եղել լվացման ուղարկելու նպատակով, որը ոչ մի բացասական ազդեցություն չի կարող ունենալ ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների վրա, հետևաբար այդ հարցը դուրս է դիտորդների իրավասության սահմաններից:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի այն մտահոգությանը, թե նոր ձերբակալվածներ ընդունելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը նրանց չէր կարող տրամադրել նոր սպիտակեղեն, ապա տեղեկացվում է, որ նոր ձերբակալվածներ ընդունելու դեպքում նրանց նույնպես կարող էր տրամադրվել նոր սպիտակեղեն, քանի որ տվյալ պահին ՁՊՎ-ում առկա է եղել 8 լրակազմ մաքուր սպիտակեղեն:

Խախտումներ.

<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակը ըստ պահանջի չլրացնելու հանգամանքը հիմնավորվել է, ինչի կապակցությամբ ՁՊՎ վարչակազմը հրահանգավորվել է նշված սյունակում նշել անձի ձերբակալման ամսաթիվը ու ժամը:

Ձերբակալված Ս.Թ-ն ՁՊՎ է ընդունվել 25.02.2017թ. ժամը 10:25-ին, ով 28.02.2017թ. ժամը 10:15-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Հրազդան>> ՔԿՀ, սակայն ՁՊՎ-ի ոստիկանը <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 9-րդ սյունակում կալանավորին տեղափոխելու ամսաթիվը սխալ է նշել, այնուհետև ջնջումներ կատարել: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում սխալ և ջնջումներով գրառումներ կատարելու համար ՁՊՎ-ի ոստիկանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ ավագ տեսուչ-հերթապահը նախազգուշացվել է:

Ձերբակալված Կ.Ք-ին բուժօգնություն ցուցաբերելու համար երկու անգամ ՁՊՎ է հրավիրվել շտապ օգնություն, որոնց կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնություն և համապատասխան գրանցամատյանում նշումներ են կատարել, որ ձերբակալվածի մոտ առկա է <<Հեպատիտ-Ց>> հիվանդությունը, սակայն բուժաշխատողները ձերբակալվածին համապատասխան բուժհաստատություն տեղափոխելու վերաբերյալ գրավոր եզրակացություն չեն տվել, այդ իսկ պատճառով էլ վերջինս պահվել է ՁՊՎ-ում:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ